



ԾՆՈՂԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԸ ՃԱՇԿԵՐՈՅԹՈՎ ՆՇԵՑ «ՈՒՍՈՒՑՉԱՅ ՕՐ»Ը



Հ.Ա.Գ.ի Ծնողական Մարմինը, 7 Մարտի, 2011-ին, «Ուսուցչաց Օր»ուայ նախօրեակին, դպրոցի կրթական մշակները պատուեց Ուսուցչարանին մեջ կայացած ճաշկերոյթով մը: Ծնողական Մարմինի կողմէ խօսք առին ատենապետուհի Տիկ. Մարալ Հայտօսթեան եւ Տիկ. Լենա Պաղտոյեան հայերէնով, իսկ Տիկ. Սիլվա Լեփեճեան՝ արաբերէնով: Ապա նուէրներ տրուեցան Պրն. Տնօրէնին եւ Ուսուցչական կազմին: Տնօրէն Դոկտ. Չ. Սարլուեան թարգմանը հանդիսանալով կրթական մշակներու զգացումներուն, շնորհակալական եւ գնահատանքի խօսքով հանդէս եկաւ: Ուրախ եւ հաճելի մթնոլորտի մը մեջ կերուիումը շարունակուեցաւ:

- «Ուսուցչաց Օր»ը նաեւ նշուեցաւ դպրոցէն ներս ժԱ. դասարանի կազմակերպութեամբ, 11 Մարտի, 2011-ին, եկեղեցիի հանդիսասրահին մէջ: Եղան օրուան պատշաճ խօսքեր, ընկերային խաղեր ուսուցիչներու մասնակցութեամբ, աշակերտութեան կողմէ կրթական մշակներու իւրայատուկ մրցանակաբաշխութիւն



եւ աշակերտներու հարցադրումով եւ կրթական մշակներու պատասխանով յատուկ ֆիլմի ցուցադրութիւն, կարկանդակի հատում եւ սպասարկութիւն եւ Պրն. Տնօրէնին կողմէ փակման եւ շնորհակալութեան խօսք:

ՓԻԷՌ ՇԵՄԱՍԵԱՆ Հ.Ա.Գ.-Ի ՄԷՋ

Լիբանանահայ ծանօթ դերասան Տիար Փիէռ Շեմասեան Հ.Ա.Գ.ի ատենամարզանքի հիւրը եղաւ 11



Փետրուարի, 2011-ին: Պրն. Տնօրէնը յարգելի հիւրը ներկայացնելէ ետք, Տիար Արմէն Իւրնէշլեան հետաքրքրական հարցազրոյց մը ունեցաւ Փիէռ Շեմասեանի հետ, որ իր հիւմըրով լեցուն պատասխաններով եւ իր կեանքէն ծիծաղաշարժ դրուագներով խանդավառեց աշակերտութիւնը: Դերասանը պատասխանեց նաեւ աշակերտներու հարցումներուն:

Հ.Ա.Գ.-Ի ՊԵՅՐՈՒԹԻ ՇՐՋ. ՄԻՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

23 Փետրուարի, 2011-ին, Հ.Ա.Գ.-ի Շրջանաւարտից Միութեան Պէյրութի վարչութիւնը նիստ գումարելով Պրն. Տնօրէնին ներկայութեան, ընտրեց իր դիւանը՝ Տիար Արմէն Վայեճեան (Ատենապետ), Օրդ. Սեւան Չեօրեքճեան (փոխ-Ատենապետուհի), Օրդ. Հուրի Զետենեան (ատենադպրուհի), Տիար Շանթ Իգնատոսեան (Գանձապահ), խորհրդականներ՝ Տեարք Արամ Գազանճեան, Կրէկ Լեպլէպճեան եւ Յակոբ Գեորգեան:

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԺԵՍՏ ՄԸ

Արդէն երրորդ տարին է որ 1951-ի երախտագէտ շրջանաւարտ, պէյրութաբնակ Տիար Համբարձում Թերզեան, դպրոցին իր տարեկան նուիրատուութիւնը՝ 5000 տոլար սրտաբուխ կերպով կը կատարէ դպրոցին: Կը գնահատենք այս ազնիւ ու դրական մօտեցումը ու կը մաղթենք որ դառնայ օրինակելի: Ընտրակալութիւն բարերարին:

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

- 3 Դեկտեմբերին, Մանկապարտեզի եւ Նախակրթարանի աշակերտները այցելեցին Պիեղ՝ արաբերէն գիրքերու ցուցահանդես-վաճառքին:

- 9 Դեկտեմբերին, Նախ. Ա-2. աշակերտները ՏԵՐ Մելգոնեան թատերա-սրահին մէջ ներկայ եղան ԹՄՄ-ի Վաչէ Ատրունիի բեմադրած «Ալինը եւ Խաւարը» ներկայացման:

- 15 Դեկտեմբերին, Նախ. Ա-2., 17 Դեկտեմբերին Է-ԺԲ. դասարանները եւ



21 Դեկտեմբերին Մանկապարտեզը «Լուկոս Յոփ» նաւին վրայ կայացող գիրքե-րու ցուցահանդես-վաճառքը այցելեցին:

- 28 Դեկտեմբերին, Պատմութեան Ակումբի անդամները դպրոցին մէջ The Last Mohican ֆիլմը դիտելէ ետք, Պլիս փողոցի Պըրկըր քինկի մէջ հաւաքական ճաշ ունեցան:

- 25 Փետրուարին, Նախակրթարանի

Ա.-Էն Միջնակարգ Ը. դասարանի աշակերտները Յովհ. Պօղոսեան սրահին մէջ ներկայ եղան Հայ Աւետ. Փ. Է. Թորոսեան Միջնակարգ Վարժարանի թատերախումբի «Ճպումն ու Մրջինը» երգախառն ներկայացումին, բեմադրուած Ռոպեր Առաքելեանի կողմէ:

- 1 Մարտին, Մանկապարտեզի աշակերտները, գլխաւորութեամբ մանկապար-



տիգականուհիին, այցելեցին Չալգայի McDonald-ը եւ հոն ճաշեցին:

- 12 Մարտին, Պատմութեան Ակումբը, առաջնորդութեամբ Պրն. Տուրէնին, դիտեցին The King's Speech ֆիլմը, որ Անգլիոյ ճորճ 2. թագաւորին (1937-1952) մասին էր, Էշրեֆիէի Կրանտ Սինեմա շարժանկարի սրահին մէջ:

- 18 Մարտի, 2011-ին, Նախ. Ե. դասարանի աշակերտները Յ. Պօղոսեան

սրահին մէջ ներկայ եղան «Մանուկներու Իրաւունքներու Օր»ուան առթիւ կազմակերպուած հաւաքին:

- 22 Մարտին, Մանկապարտեզի աշակերտները մանկապարտիզպանուհիին առաջնորդութեամբ այցելեցին Fun Zone խաղավայրը:

- Ընդառաջելով Աք. Նշան Մայր Եկեղեցւոյ թաղականութեան հրաւերին, ԺԱ. դասարանի աշակերտները, ընկերակցութեամբ իրենց դաստիարակին, հոգեւոր տեսուչին եւ Պրն. Տուրէնին, 30 Մարտին ներկայ եղան Միջինքի Արեւագալի արարողութեան եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսի քարոզին:

- 31 Մարտի, 2011-ին, Նախ. Ա-Ե. կարգերը ներկայ եղան Յ. ՏԵՐ Մելգոնեան թատերասրահին մէջ Յովհաննես Թումանեանի «Անբան Յուրին» մանկապատանեկան թատերախաղին, բեմադրութեամբ Հրաչեայ Գասպարեանին:

- 5 Ապրիլի, 2011-ին, Նախ. Ա.Էն Երկրորդական ԺԱ. կարգերու աշակերտները ներկայ եղան Ս. Էշմիածնի եւ ՀԲԸՄԻ Նորքի Հայրողեաց Արուեստի համոյթներու ներկայացուցչական խումբի ելոյթին, Յ. Պօղոսեան թատերասրահին մէջ:

- 6 Ապրիլի, 2011-ին, ԺԱ. դասարանի աշակերտները, առաջնորդութեամբ Պրն. Հիւսիսի, Պելլուրթի Ամերիկեան Համալսարանի կողմնորոշման ծրագրին մասնակցեցան, A.U.B.-ի մէջ:

ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ Հ.Ա.Գ.-ԷՆ



- Հ.Ա.Գ. Նախակրթարանի բաժնի անգլերէնի մայրուս ուսուցչուհի Օրդ. Նայիրի Սանթուրեան, 18 Դեկտեմբերի, 2010-ին պսակուեցաւ Տիար Թոնի Լոհրայի հետ, Հարիսայի պագիլիքին մէջ:

- Հ.Ա.Գ.ի գրադարանը վերջերս գիրքեր նուէր ստացաւ հանգուցեալներ Տիկ. Անիթա Եավրուի եւ իր դստեր Սարիա-նայի թողունէն՝ 120 գիրքեր, ինչպէս նաեւ բազմաթիւ գիրքեր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողի-

կոսարանէն, Դոկտ. Ե. Զատունիէն եւ շրջանաւարտ Տիար Պարոյր Աղպաշեանէն:

- Թուրքիոյ վարչապետ Էրտողանի Լիբանան այցին առ ի բողոք, ընդառաջելով Ազգային երեք յարանուանութիւններու եւ կուսակցութիւններու հրաւերին, 25 Նոյեմբերի ժամը 12.30-ին, Պելլուրթի նահատակաց յուշարձանի առջեւ տեղի ունեցած բողոքի միջինկին ներկայ եղան 8-12-րդ դասարանի աշակերտները Պրն. Տուրէնին առաջնորդութեամբ եւ ընկերակցութեամբ դաստիարակ ուսուցիչներու:

- Հայաստան Հիմնադրամի 25 Նոյեմբերի, 2010-ի թելեթոնին Հայ Աւետ. Գոլէճի աշակերտութիւնն ու անձնակազմը մասնակցեցաւ 503.000 լ. ոսկիով:

- Ամանորի աշակերտական բարեսիրական հանգանա-

կանութենէն գոյացաւ 1.186.000 լ.ո.: Գումարներ բաժնուեցան Ազգային Ծերանոցին, Զրիստոնեական Ընկերային Ծառայութեան Կեդրոնին, Չուարթնոց Թերաճ Մանուկներու Կեդրոնին, Արցախի Ֆոնտին, Լ.Օ.Խ.ին, Թռչնոց Բոյնին, Ազգային Բուժարանին, Լիբանանեան Կարմիր Խաչին, Հ.Ա.Գ.ի կրթանպաստի Ֆոնտին, եւն:

- Հ.Ա.Գ.ի Տիկնանց Օժանդակ Մարմինը Ա. Եկեղեցիի հանդիսասրահին մէջ պագար-վիճակահանութիւն եւ հիւրասիրութիւն մը կազմակերպեց 10 Դեկտեմբերի, 2010-ին: Օժանդակ Մարմինը դպրոցի տնօրէնութեան գրասենեակը փարքեով օժտեց:

- Հ.Ա.Գ.ի Տիկնանց Ընկերային Յանձնախումբը Karaoke-ի երեկոյ մը կազմակերպեց 17 Դեկտեմբերի, 2010-ին: Ներկա-



ներ հաճելի պահեր ըմբռնեցին: Տեղի ունեցաւ նաեւ հիւրասիրութիւն:

- Մանկապարտեզը 18 Դեկտեմբերի, 2010-ին, Եկեղեցիի հանդիսասրահին մէջ Ամանորի յայտագիր մը գործադրեց:

ԼՈՒՐԵՐ ՇՐՋԱՆԱԻԱՐՏՆԵՐԷ

- 16 Դեկտեմբերի, 2010-ին, 1965-ի շրջանաւարտ Տիար Յովակիմ Զիրքճեանի բարերարութեամբ, Համազգայինի վերակազմաւորուած գրատան բացումը կատարուեցաւ բարերարին ներկայութեամբ, ի յիշատակ իր մօր՝ Վարսենիկ Զիրքճեանի:

- Լոս Անճելըսաքնակ Յ.Ա.Գ.-ի նախկին աշակերտներէն Տիար Սիւնա Սիւնեան, վերջերս, նշանակուած է ՀԲԸ Միութեան փոխ-նախագահ:

- 22 Յունիսի, 2010-ի շաբաթավերջին, Յ.Ա.Գ.-ի 1971-ի աստիճանական դասարանի անդամները իրենց տիկիներով եւ ամուսիններով ելոյթային եւ

- 1951-ի շրջանաւարտ Տիար Համբարձում Թերզեան, 19 Դեկտեմբերի, 2010-ին, Լիբանանի Համախարբերոցիական Միութեան վարչութեան անդամ ընտրուած է:

- Յ.Ա.Գ.-ի Գահիրեաքնակ շրջանաւարտներ Տեր եւ Տիկ. Տիգրան եւ Անգին Գալայճեանի նախագահութեամբ տեղի ունեցած է Լ.Օ.Խ.ի հայկական ձեռագործներու ցուցահանդէսը, որուն բացումը կատարուած է իրենց ձեռքով Տիգրանի քաղաքապետարանի հանրային պարտեզի ապակեայ սրահին մէջ:

- 1980-ի շրջանաւարտուողի Տիկ. Մարալ Յարութիւնեան-Յովիւեան, 9 Դեկտեմբերի, 2010-ին, Թեքեան Մշակութային Միութեան Լիբանանի Տեղական վարչութեան խորհրդակազմի նշանակուած է:

- Չիկաստանի մայրաքաղաք Պէյթիւն-Կի Ազգային Թանգարանին մէջ տեղի ունեցած միջազգային «պահպանել կենսոլորտը» խորագրեալ նկարչական ցուցահանդէսին Լիբանանը ներկայացուցած են Տեր եւ Տիկ. Յակոբ (1978-ի շրջանաւարտ) եւ Լեւա Սիւլահեաններ: Յակոբ ներկայացուցած է իր «Ժամանակը վերջացաւ» ստեղծագործութիւնը:

- 18 Նոյեմբերի, 2010-ին, Երեւան Հայաստանի Գրողներու Միութեան տան



ԱՄՆի այլեւայլ քաղաքներէն մղոններ ճամբորդելով վերահաւաք մը ունեցած են Լիւ Եորքի մէջ: Ձեռնարկներուն վերջին օրը, Տեր եւ Տիկ. Վահէ Պալիոզեանի բնակարանը հաւաքուած են: Այս առթիւ դպրոցին ի նպաստ կատարած են 3000 տոլարի հասնող նուիրատուութիւններ: (Տեսնել նուիրատուութեան բաժինը):

- 18 Յունուարի, 2011-ին, 1960-ի շրջանաւարտ Տիար Հայկ Մսերլեան ՀԲԸՄի Հարաւային Գալիֆորնիայի Շրջանակային Վարչութեան Ատենապետ ընտրուած է:



- Ֆրեզնոյաքնակ, 1952-ի շրջանաւարտ Տիար Վաչէ Սողոմոնեան, 15 Յուլիսի, 2010-ին, 11 հոգիանոց խումբի մը հետ Արարատ լեռը բարձրացած է:



Խումբը Արարատի գագաթին զետեղած է Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի հանրապետութիւններու դրօշները:



մէջ տեղի ունեցաւ 1968-ի շրջանաւարտ Դոկտ. Վահան Չանոյեանի «Վերադարձ» խորագրով բանաստեղծութիւններու գիրքին շնորհահանդէսը: Խօսք առին Հայաստանի Գրողներու Միութեան նախագահ Լեւոն Անանեան, վաստակաւոր արձակագիր Ալիս Յովհաննեսեան, խըմ-

բագիր եւ հեղինակ Անի Փաշայեան, Հայաստանի արտաքին գործոց նախկին նախարար, երեսփոխան Բաֆֆի Յովհաննեսեան եւ հեղինակը ինք:

- 1998-ի շրջանաւարտ երգահան Տիար Կարօ Ալեւեան, 11 Փետրուարի, 2011-ին, ՍԷՆ Ժոզէֆ Եկեղեցին մէջ խմբավարեց Լիբանանի Ազգ. Սիմֆոնիք նուագախումբը: Յայտագրի վրայ էին Վերտի, Պիզէ, ՍԷՆ Սան, Մասէ: Իսկ նախկին աշակերտ խմբավար Տիար Յարութ Ֆազլեան Նոյն վայրին մէջ 18 Փետրուարին ղեկավարեց Լիբանանի Ազգ. Սիմֆոնիք նուագախումբը:

- 1964-ի շրջանաւարտ Տիար Աբօ Սաղոմեան, ի յիշատակ իր վաղամտնիկ զաւկին՝ Յովիկ Սաղոմեանի, 25.000 տոլար եւս նուիրելով՝ 100.000 տոլարի հասցուց իր նուիրատուութիւնը, Ուաշինկթընի Հայ Դատի «Զեփիթըն Կէթօլէյ» վարժողական ծրագրի կեդրոնի շէնքը՝ Յովիկ Սաղոմեանի անուամբ կոչելու համար, եւ դստեր հետ ներկայ եղաւ շէնքի մկրտութեան արարողութեան:

- 7 Օգոստոսի, 2010-ին, 1993-ի շրջանաւարտ Տիար Ալէք Պալեան, Ամերիկայի Տիւքսոն Համալսարանէն վկայուեցաւ Master of Science in Leadership աստիճանով:

- 1964-ի շրջանաւարտ հրապարակագիր-խմբագիր Տիար Պարոյր Աղապշեան 2010-ի վերջերուն լոյս ընծայեց «Պատահիկներ՝ Մեծերէն» գիրքը:

- 10 Մարտի, 2011-ին, 1975-ի շրջանաւարտ Տոքթ. Պերճ Տագեւեան Լ.Օ.Խ. Առողջապահական Յանձնախումբին եւ «Արաքսի Պուլուրճեան» ընկերաբժշկական կեդրոնի նախագգուչական բաժանմունքին կազմակերպութեամբ դասախօսեց «Մարտոզական գործարաններու հիւանդութիւնները» նիւթով:

- Եւ. Սի. Էլ. Էյ. Համալսարանի Հայոց Լեզուի եւ մշակոյթի բաժանմունքի կազմակերպութեամբ, 3 Ապրիլի, 2011-ին տեղի ունեցած 9-րդ տարեկան ճաշկերոյթի ընթացքին, 1971-ի շրջանաւարտ, երաժշտագետ, երգահան եւ խմբավար Լարք երաժշտական դպրոցի Տեր եւ Տնօրէն Տիար Վաչէ Պարսումեան արժանացաւ «Նարեկացի» անուան գնահատանքին: Իր մասին խօսեցաւ հայրենի երգահան Տիգրան Մանսուրեան:

ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ... Շարունակուած Բ. Էջէն

Ներկայ էին եւ դպրոցէն ծնողներ եւ դուրսէն մեծ թիւով հիւրեր եւ մանուկներ: Կաղանդ Պապային ժամանումը ուրախութեամբ դիմաւորուեցաւ բոլորէն:

- Մարտի 1-7, Հայ Գիրքի Շաբաթ Էր Յ.Ա.Գ.էն Ներս: Այս առիթով կատարուած նուիրահաւաքէն գոյացաւ 632.000 Լ.Ո. եւ 92 գիրքեր:

- 2010-2011-ի երկրորդ Ծնողական-Ուսուցչական հանդիպումը տեղի ունեցաւ 25 Փետրուարի, 2011-ին: Տեսակցութիւններու ասարտին Պրն. Տնօրէնը խօսեցաւ մանկավարժական նիւթերու մասին:

- Ազգ. Առաջնորդարանի Սիեր Տուլհաճեան շարադրական մրցանակին արժանացան Արեգ Տաղեան (ԺԲ.) եւ Շուշան Զեյնեան (Ը.), իրենց մրցանակը ստանալով 25 Փետրուարին կազմակերպուած հրապարակային հանդիսութեան մը ընթացքին:

ԲԱՆՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ

- 1982-ի շրջանաւարտ Տիար Տիգրան Զատուկի եւ տիկինը, 7 Հոկտեմբերի, 2011-ին, բախտաւորուած են երկուորեակ մանչ զաւակներով՝ Քայլ եւ Լեռն:

ՆՇԱՆՏՈՒՔ

- 1992-2000-ի Յ.Ա.Գ.ի նախկին աշակերտ Պրն. Կարպիս Արթիւնեան նշանուած է Օրդ. Մարլէն Փոլատեանի հետ, 29 Յունուարի, 2011-ին, Պէյրուք:

- 1990-2003-ի Յ.Ա.Գ.ի նախկին աշակերտուհի Օրդ. Թամար Զեստենեան նշանուած է Պրն. Բաֆֆի Պչաքեանի հետ, 31 Դեկտեմբերի, 2011-ին, Պէյրուք:

- 2008-ի շրջանաւարտուհի եւ դպրոցի Շրջ. Միութեան վարչական Օրդ. Սե-

ւան Չօրեքեան նշանուած է Պրն. Յակոբ Չօլմէքեանի հետ, 17 Յունիսի, 2010, Պէյրուք:

ՊՄԱԿ

- 1992-ի շրջանաւարտուհի եւ դպրոցի Շրջ. Միութեան նախկին վարչական Օրդ. Լիզա Սեքիլեան պսակուած է Տիար Նատեր Նասիֆի հետ, 26 Դեկտեմբերի, 2010-ին, Աւետման Օրթոտոքս եկեղեցիին մէջ, Պէյրուք:

ՄԱՀ

- 1945-ի շրջանաւարտուհի Օրդ. Արփիլէ Թաֆեճեան (1928-2010), յետ կարճատեւ հիւանդութեան մահացած է 12 Դեկտեմբերի, 2010-ին, Պէյրուքի մէջ:

- 1959-ի շրջանաւարտ Տիար Գեորգ

Վիշապեան (1940-2010), անողորհ հիւանդութեան պատճառով մահացած է 13 Դեկտեմբերի, 2010-ին Փրովիտենսի (ԱՄՆ) մէջ:

- 1989-ի շրջանաւարտուհի Օրդ. Փոլին Արսլանեան (1972-2011), անակնկալ հիւանդութեան պատճառով մահացած է Պէյրուքի Ամերիկեան Զիւանդանցիին մէջ, 20 Յունուարի, 2011-ին:

- 1937-1939 նախկին աշակերտուհի Տիկ. Մարգրիտ Մազաքեան-Եարտըմեան (1925-2011) մահացած է Լոս Անճելոսի մէջ, 9 Մարտի, 2011-ին, անկում մը ամիս մը ետք: Հանգուցեալը քանի մը տարի առաջ դպրոցի իւրաքանչիւր կրթական մշակի ասեղնագործ խաչ մը նուիրած էր:

- 1967-ի շրջանաւարտ Տիար Կարո Թերզեան (1948-2010) քանի մը ամիս առաջ յանկարծամահ եղած է Գանատայի մէջ:

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ Ի ՆՊԱՍՏ ԳՊՐՈՑԻՆ

«Լրատու»ի նախորդ թիւի հրատարակութենէն ասդին շնորհակալութեամբ ստացուած են հետեւեալ նուիրատուութիւնները.

Ազնի բարերար Տիար Գեորգ Արապեանի եռամսեայ յատկացումը՝ 3000 տոլար: Ողբ. Պեսիլիոս Պեսոսի յիշատակին այլազան նուիրատուներ՝ 1600 տոլար, որպէս կրթանպաստ երեք աշակերտներու:

1971-ի ասարական դասարանի վերահաւաքին նուիրատուներն էին Տէր եւ Տիկ. Սեդո եւ Սիլվա Թիւթիւնեան-Եօրտէքեան 300, Տէր եւ Տիկ. Հայկ Կիւլեսերեան 300, Տէր եւ Տիկ. Հրաչ եւ Հելլա Մաղաքեան-Սարգիս 300, Տէր եւ Տիկ. Ճորճ Տապալաղ 250, Տէր եւ Տիկ. Մանուէլ Համալեան 250, Տէր եւ Տիկ. Սեթ Պչաքեան 200, Տէր եւ Տիկ. Բաֆֆի եւ Արսիլէ Գալֆայեան-Կեօվճեյեան 200, Տէր եւ Տիկ. Ճորճ եւ Էլիզ Տայեան-Զարամ 200, Տէր եւ Տիկ. Սագո եւ Ռուպինա Թիւթիւնեան-Սանտրիք 200, Տէր եւ Տիկ. Վահէ Պալիոգեան 100, Տէր եւ Տիկ. Սեդո Գասարճեան 100, Տէր եւ Տիկ. Հրաչ Գրիգորեան 100, Տէր եւ Տիկ. Պերճ եւ Վարսենիկ Տոյթումեան-Մասոյեան 100, Տիկ. Ռուշի Գալֆայեան-Սարգիս 100, Դոկտ. Արա Թեքեան 100 եւ Տիկ. Յասմիկ Սվաճեան-Եազըճեան 100:

Յ.Ա.Գ.-ի շրջանաւարտ Տիար Ալէք Պալեանի Duquesne Համալսարանի School of Leadership and professional advance-

ment-ի Business Ethics-ի մէջ երկրորդ մագիստրոսի տիտղոսին արժանանալուն համար, մայրը՝ Տիկ. Սօսի Պալեան եւ եղբայրը Պր. Արմէն 200.000 Լ.Ն. նուիրեցին Յ.Ա.Գ.ի Արա Պալեան Կրթական Ֆոնտին:

Շրջանաւարտ Տիար Յարութ Միսիրեան (Պէյրուք) ՍիՓԱՆի 2010-ի թիւին առ ի գնահատանք 200 տոլար, շրջանաւարտուհի Տիկ. Սիլվա Տէր Պետրոսեան-Վարդանեան (Պէյրուք), Ֆենիսիայի 22 Մայիսի, 2010-ի ճաշկերոյթին առթիւ 200 տոլար, շրջանաւարտուհի Տիկ. Անգիլէ Տէր Պետրոսեան Գալայճեան (Գահիրէ), ի յիշատակ իր մօր ողբ. Արուսեակ Տէր Պետրոսեանի 200.000 Լ.Ն., Տոքթ. Արա Թիլքեան (ԱՄՆ), իբր կրթանպաստ 1000 տոլար: Նախկին քարտուղարուհի Տիկ. Սեդա Գարագըլեան 50 տոլար «ՍիՓԱՆ»ի առ ի գնահատանք: Նոյն նպատակին՝ Կտանեան քոյրեր (ԱՄՆ) երկու առիթներով 50-ական տոլար: Օրդ. Ովսաննա Իզմիրլեան ի յիշատակ Հրաչ եւ Թագուհի Փրեշաշարեաններու 50.000 Լ.Ն.: Օրդ. Աստղիկ եւ Անահիտ Փափագեան 50.000 Լ.Ն., ի յիշատակ Մարգրիտ Եարտըմեանի: Իսկ Տէր եւ Տիկ. Յակոբ Գոճատեյեան ի յիշատակ իրենց մօր՝ Մարգրիտ Եարտըմեանի 100.000 Լ.Ն., Տիկ. Մարի Պեսոս-Զարամ ի յիշատակ իր եղբօր՝ ողբ. Պեսիլիոս Պեսոսի 150.000 Լ.Ն.:

«Արա Պալեան Կրթական Ֆոնտ»ին Արա Պալեանի յիշատակին, Տիկ. Սօսի Պալեան 200.000 Լ.Ն., Տիար Արմէն Պալեան 300.000 Լ.Ն., Տոքթ. Արմանտ եւ Դոկտ. Արաք Գրիգորեան (ԱՄՆ) 150.000 Լ.Ն., Տէր եւ Տիկ. Ալէք եւ Շողակ Պալեան (ԱՄՆ) 150.000 Լ.Ն., օրիորդներ՝ Արշակունի եւ Լուսին Տէր Խաչատուրեան 100.000 Լ.Ն., Տէր եւ Տիկ. Չարեհ եւ Սիլվա Տէր Խաչատուրեան 75.000 Լ.Ն., Տէր եւ Տիկ. Տարօն եւ Մարլէն Տէր Խաչատուրեան (Իտալիա) 75.000 Լ.Ն. եւ Տէր եւ Տիկ. Բաֆֆի եւ Շողիկ Մետրոպեան 75.000 Լ.Ն.:

Տիկ. Լիւսի Թիւթիւնեան իր՝ խոհանոցի վերաբերող Lucy's Favorites գիրքէն 23 օրինակ նուիրեց, որ հատը 50 տոլարով վաճառուի, հասոյթը դպրոցին: Փափաքողներ հաշուակալութենէն կրնան գնել:

«ԼՐԱՏՈՒ»Ի ՖՈՆՏԻՆ

Նախորդ թիւէն ի վեր ստացման կարգով հետեւեալ նուիրատուութիւնները շնորհակալութեամբ ստացած ենք.

Տիկ. Լիւսի Թիւթիւնեան (Պէյրուք)	100 տոլար
Տիար Ալպեր Սարգիսեան (Պէյրուք)	100 տոլար
Շրջանաւարտ Տիար Ալէքս Աճեմեան (Պէյրուք)	50.000 Լ.Ն.
Շրջանաւարտուհի Տիկ. Լենա Գիւլիանեան (Անգլիա)	100 տոլար
Շրջանաւարտ Տիար Բաֆֆի Գրաճեան (ԱՄՆ)	200 տոլար
Շրջանաւարտ Օշին Սարաֆեան (Գանատա)	200 տոլար

Խմբագիր՝ Տնօրէն Չաւէն Մ. Սաղրլեան

Խորհրդատուներ՝ Տեարք Ներսէ Պաղտոյեան եւ Յակոբ Տեմիրճեան
Էջադրում՝ քարտուղարուհի Շողեր Աղպաշեան-Ֆայսալ

Y.M. Philibossian Armenian Evangelical College P.O.Box 3672- Beirut, Tel: 01-349816 - Fax 01-751469

E-mail: A_E_C@cyberia.net.lb